ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6/8

30 ՄԱՅԻՍԻ 2024 ԹՎԱԿԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

(օրենքի ուժով հրավիրված)

Համայնքի ավագանու նիստին ներկա էին 10 անդամներ:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու օրենքի ուժով հրավիրված հանդիսավոր նիստին մասնակցում էին համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներ, ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ՝ Հայկ Հարությունյանը, Հայ առաքելական եկեղեցու Սյունյաց թեմի ներկայացուցիչ Տեր Ռաֆայել քահանա Խաչիկյանը, համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների ներկայացուցիչներ, Մեղրի համայնքի վարչական ղեկավարներ:

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար Ա. Նավասարդյանը:

Երդման արարողակարգը բացվեց ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ղեկավար Խաչատուր Ադրեասյանի համայնքի բնակիչներին տրված երդմամբ.

«Ես՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ղեկավար Խաչատուր Սեյրանի Անդրեասյանս, ստանձնելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ղեկավարի պաշտոնը, հանդիսավոր երդվում եմ՝ պաշտոնավարման ժամանակահատվածում Մեղրի համայնքի ղեկավարի՝ օրենքով ամրագրված լիազորություններն իրականացնել ազնվորեն և բարեխղճորեն՝ որդեգրելով թափանցիկ աշխատաոճ, անշեղորեն պահպանելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը և օրենքները, Մեղրի համայնքի ավագանու որոշումները, մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները:
Անվերապահորեն ծառայել Մեղրի համայնքի զարգացմանն ու բարգավաճմանը՝ մշտապես գործելով ի շահ համայնքի և ի բարօրություն նրա բնակիչների»:

Երդման ընդունումից հետո շնորհավորական ելույթներով հանդես եկան ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ՝ Հայկ Հարությունյանը, Հայ առաքելական եկեղեցու Սյունյաց թեմի ներկայացուցիչ Տեր Ռաֆայել քահանա Խաչիկյանը, նախկին համայնքի ղեկավար Բ. Զաքարյանը:

Ավագանու անդամներ

ՍՈՆԱ ԱԴԱՄՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ԱՂԱՄԱԼՅԱՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ԱՐՏՈՒՐ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԲԱԳՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ

ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՄԱՐՈՒՍՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՄԱՐՅԱՄ ՄԻՔԱԵԼՅԱՆ

ԱՐԵՎԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԱՆԺԵԼԱ ՎԱՆԵՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Խ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Ա. Նավասարդյանը